ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՄԵՆ ՂՈՒԼԱՐՅԱՆԻ ՄՈՍԿՎԱ (ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ) ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Արմեն Ղուլարյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ և ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

ՌԴ Մոսկվա քաղաք, փետրվարի 20-ից 22-ը

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

ՌԴ շինարարության և բնակ-կոմունալ տնտեսության նախարարություն

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)

Ի կատարումն ՀՀ քաղաքաշինության նախարարության և ՌԴ շինարարության և բնակկոմունալ տնտեսության նախարարության միջև 2016 թվականի ապրիլի 7-ին Երևան քաղաքում ստորագրված քաղաքաշինության, ճարտարապետության, շինարարության, բնակարանային քաղաքականության և բնակարանային-կոմունալ տնտեսության բնագավառներում համագործակցության Համաձայնագրի կետերի, շինարարության գծով հայ-ռուսական աշխատանքային խմբի (այսուհետ՝ Աշխատանքային խումբ) առաջին նստաշրջանին մասնակցելու:

Հայկական կողմի աշխատանքային խումբը ղեկավարում էր՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի տեղակալ Արմեն Ղուլարյանը:

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Շինարարության և ճարտարապետության ոլորտներ, շինարարության մեջ նոր տեխնոլոգիաների կիրառում, Ռուսաստանի Դաշնությունում և Հայաստանի Հանրապետությունում մշակված նորմերի փոխադարձ օգտագործման հնարավորություններ և մի շարք այլ թեմաներ:

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Հանդիպումներ տեղի ունեցան ՌԴ շինարարության և բնակ-կոմունալ տնտեսության նախարարի տեղակալ Խամիտ Մավլիարովի,ոլորտի պատասխանատու կազմի և ՌԴ-ում շինարարական կազմակերպությունների և շինարարական նյութերի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ:

Ձեռք բերվեցին պայմանավորվածություններ շինարարության և ճարտարապետության ոլորտներում փորձի և տեղեկատվության փոխանակման, առկա խնդիրների լուծումների նկատմամբ փոխհամաձայնեցված մոտեցումների և քննարկումների շարունակելիության, շինարարության ոլորտում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և գնագոյացման արդիականացման համատեղ մշակման, նոր տեխնոլոգիաների ներդրման և մի շարք այլ ուղղություններով:

Ստորագրվեցին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի և Ռուսաստանի Դաշնության շինարարության և բնակ-կոմունալ տնտեսության նախարարության համագործակցության ծրագիրը 2018-2019 թ.թ համար, և Հայ-ռուսական տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի շրջանակներում շինարարության ոլորտի հայ-ռուսական Աշխատանքային խմբի (այսուհետ Աշխատանքային խումբ) I նիստի վերաբերյալ Արձանագրությունը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հանդիպման ընթացքում համանախագահները նշել են երկկողմ հարաբերությունների դրական կողմերը և հաստատել են շինարարության և բնակարանային կոմունալ տնտեսության ոլորտում համագործակցությունը ամրապնդելու փոխադարձ հետաքրքրությունը

Հանդիպման մասնակիցները որոշեցին իրականացնել Աշխատանքային խմբի հետագա գործողությունները Համաձայնագրի և Ծրագրի համաձայն: Աշխատանքային խմբի հերթական հանդիպումը նախատեսվում է անցկացվել Հայաստանի Հանրապետությունում, 2018թ.-ի ավարտին -2019թ.-ի սկզբին:

10. ԳՈՐԾՈՒՂՎՈՂԸ

Արմեն Ղուլարյան

11. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

26.02.2018թ.